

Տեղեկատվական անվտանգություն

«ԱրմԹեք-2017» գլոբալ համաժողովը

մեկնարկել է Երևանում: Քննարկման հիմնական թեմաներն են կիրառական տեխնոլոգիաների զարգացման մարտահրավերները և պաշտպանական հնարավորությունները... Հայաստանը փորձ ու ասելիք ունի: ՏՏ ոլորտում աշխատող ընկերությունների թիվը մեր երկրում 500 է, տարեկան շրջանառությունը՝ 6 մլն դոլար: Ոլորտում զբաղված է 15 հազար մասնագետ: Աճը սահմանափակվում է մասնագետների խիստ պակասով:



N 36 (684)
29.09-05.10 2017
ISSN 1829-149X
17036 >
9 771829 149003

911

Արտակարգ իրավիճակներ



ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՆՍԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF EMERGENCY SITUATIONS OF RA
МИНИСТЕРСТВО ПО ЧРЕЗВЫЧАЙНЫМ СИТУАЦИЯМ РА

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՆՍԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ

ՀՀ ԱԻՆ


ՆՈՐ ՌԱԳՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 28-ին կառավարությունը հաստատել է «ՀՀ կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիրը»:
Փաստաթուղթը մշակել են արտակարգ իրա-

վիճակների և առողջապահության նախարարությունները: Ռազմավարության հիմնական նպատակն է կատարելագործել և ամրապնդել կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման համակարգը՝ ներքին և արտաքին սպառնալիքներին և մար-

տահրավերներին դիմակայելու, ինչպես նաև մարդու, շրջակա միջավայրի վրա կենսաբանական, քիմիական ու ճառագայթային սպառնալիքների ռիսկերը նվազեցնելու համար: ■

Մանրամասները՝ էջ 3



Էկոմշակույթ ՉՎՆԱՍՎԱԾ ԿՂԳՅԱԿՆԵՐ

ԱԻՆ-ում ձևավորվել է հանձնաժողով: Արդեն կայացել են մի քանի խորհրդակցություններ. քննարկվում են անտառային հողեհների մարման գործընթացները, հրդեհաշիջման կառավարման հարցեր: Էկոմշակույթային, անտառային անվտանգության հարցեր, առաջարկներ են քննարկվում նաև շահագրգիռ այլ գերատեսչություններում:
Տարածված հաղորդագրություններում նշվում է, որ «խտրովում» 2200 հա այրված տարածքից չի վնասվել 365-ը: Վնասվել է 900 հա կաղնուտ, բայց քանի որ հրդեհը տարածվել է գետնատարած, կաղնուտը արագ է վերականգնվելու: Այրվել է 1000 հա խոտածածկ տարածք, սրանք էլ կվերականգնեն անձրևները: Փաստվել է, որ քամուց արագ տարածված հրդեհը մեծամասամբ չի վնասել բույսերի արմատային համակարգը, և հրդեհից արդեն 20 օր անց արձանագր-

վել են խոտ ու ծառերի կանաչ ծիլեր:
ԱՄՆ անտառային ծառայության «Այրված տարածքների վերականգնման և արտակարգ իրավիճակների կանխարգելման» աշխատանքային խումբն արձանագրել է հողի վերին շերտի ոչ խոր շերտային վնասում, ինչը թույլ է տալիս կանխատեսելու՝ բուսական աշխարհն արագ է վերականգնվելու, ցավոք, բացառությամբ գիհու: Ամերիկացի մասնագետներն արդեն ներկայացրել են գիհու արագ վերականգնման ծրագիր:
Կենդանական աշխարհը եական վնասներ չի կրել, անկում կա մորեխների, մի քիչ էլ՝ սողունների մասով: Արագավազ կենդանիներն ապաստանել են չվնասված կղզյակներում: Էկոլոգները պնդում են այդ կղզյակները կնպաստեն կենսաբազմազանության արագ վերականգնմանը:
ԱՄՆ աջակցությամբ ստացվել է

արբանյակային լուսանկարների վերլուծությունը. հաջորդ առավոտյան արված լուսանկարում հրդեհի 5 օջախ է արձանագրված, որոնցից մեկը մյուս 4-ից գտնվում է զգալի հեռավորության վրա: Լուսանկարը հետաքրքիր հարցեր է առաջ քաշում և կարող է բացահայտել հրդեհի բռնկման պատճառները: Լուսանկարները փոխանցվել են ՔՆՆ-չական կոմիտեին:
Անտառային հրե իրադարձությունները ցույց տվեցին, որ պետք է բարելավվի բնության հատուկ պահպանվող տարածքների անվտանգությունը:
Բնապահպանության նախարարությունն առաջարկում է ընդլայնել խոտրովի անտառի տարածքը՝ ստեղծելով բուֆերային գոտիներ: Այստեղ էլ առաջնային են համարում անտառային պահպանության տեխնիկականությունը, ինչի ուղղությամբ բանակցություններ են վարվում գործընկեր պետությունների և

դոնոր կազմակերպությունների հետ. նպատակն է հրդեհներին հակազդող տեխնիկապես հագեցած համակարգեր ունենալը: Անտառային անվտանգության խնդիրներից որոշներին արդեն հրատապ լուծում տրվել է. «խտրովում» արդեն գործում է կապի համակարգը, ինչն իր հերթին կօգտագործվի ոչ միայն հրդեհների կանխարգելման համար: Տեղակայվելու են նաև տեսախցիկներ, դիտարկում են իրականացնելու դրոններով:
...Անտառապահները «խտրովում» կենդանիների տեղաշարժ են նկատում:
«խտրովի» հայտնի ջրվեժում հրդեհից չվնասված այս կղզյակում, անտառապահները տեսել են արջերից մեկին:
Ջրվեժը, «խտրովի» գետերը, չվնասված կղզյակներն արագ կվերականգնեն անտառը: ■

Գագիկ ԵՂՅԱՆ

Կարևոր

ՕԳՈՍՏՈՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՁԵՐԸ




էջ 2

ՕՏԱՐՆԵՐԸ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԲԱՆ ՈՒՆԵՆ




էջ 3

ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՀՎԱԱԲԱԿԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՍԸ



էջ 5

ԳԻՆԵՍԻ ԳՐԶԻ ՀՎԱԿԱՆՈՐԴԸ



էջ 6



Հաջորդ տարվա բյուջեն եկամուտների մասով կազմելու է 1 տրլն 307 մլրդ դրամ՝ 2017-ի 1 տրլն 207 մլրդ դրամից, 100 մլրդով ավելի՝ հարկային եկամուտների հաշվին: Բյուջեի ծախսային մասը նախատեսվում է 1 տրլն 464 մլրդ դրամ՝ այս տարվա 1 տրլն 360 մլրդի փոխարեն: Դեֆիցիտը լինելու է մոտ 157 մլրդ դրամ՝ այս տարվա 150 մլրդի փոխարեն: Դեֆիցիտի շուրջ 80 մլրդ դրամը նախատեսվում է ստանալ ներքին աղբյուրներից, մնացածը՝ արտաքին:

ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ



Սեպտեմբերի 25-ին ՀՀ ԱԻ նախարար Դավիթ Տոնոյանը ընդունել է ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության Ուզբեկստանի գրասենյակի ղեկավար պարոն Ֆուշիմի Կատսուտոշիի գլխավորած պատվիրակությանը: Քննարկվել են «Հակահրդեհային սարքավորումների բարելավում» և «Ճգնաժամային և աղետների ռիսկի կառավարման հանրային իրազեկման ցանց» իրականացվող ծրագրերի ընթացքը: Սեպտեմբերի 27-ին նախարարության և ճապոնական «Ինգերոսեկ» խորհրդատվական ընկերության միջև ստորագրվել են խորհրդատվական ծառայությունների տրամադրման մասին համաձայնագիր: Ընկերությունը պարտավորվում է նախարարությանն աջակցել տեղեկատվային մրցույթի փաստաթղթերի պատրաստման, կազմակերպման հարցերում,

օժանդակել սահմանված չափանիշներին տրամադրվող հրշեջ գույքի համապատասխանությունը ստուգելու հարցում, ինչպես նաև կազմակերպել ՀՀ ԱԻ-ի փրկարար ծառայության հրշեջ-փրկարարական անձնակազմի վերապատրաստումը: Համաձայնագիրը ստորագրել է աշխատակազմի ղեկավար Գագիկ Հայրապետյանը, ճապոնական կողմից՝ «Ինգերոսեկ» ընկերության ծրագրի կառավարիչ Տակեֆումի Մայումին: Համաձայնագիրը կնքվել է «Հակահրդեհային սարքավորումների բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որի շնորհիվ նախարարությանը կտրամադրվի 36 մլրդ հրշեջ մեքենա և 3 ավտոսանդուղք, որոնք տրամադրվելու են Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզային հրշեջ-փրկարարական ջոկատներին:

ՇՆՈՐՀԿԵԼ Ե ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐԻ ԿՈՉՈՒՄ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն Մուշեղ Ղազարյանին շնորհվել է գեներալ-մայորի կոչում: Մուշեղ Ղազարյանը 55 տարեկան է, արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում աշխատում է 2004 թվականից: Եղել է քաղաքացիական պաշտպանության գնդի հրամանատար, Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, Երևան քաղաքի փրկարարական վարչության պետ, իսկ 2016-ի հուլիսի 18-ից՝ ԱԻՆ փրկարար ծառայության տնօրեն:



ԸՆԴՈՐԻՆԱԿԵԼԻ

Ռուսական մամուլը տարածում է Լիպեցկի մարզի անտառներում հրդեհավտանգության մասին զգուշացումներ ու պահանջները: Հրդեհավտանգ իրավիճակը հսկելու համար անտառտնտեսության կազմակերպությունները ձեռնարկել են կարևոր միջոցառումներ. անտառզանգվածներ մուտքերին դրված են արգելափակոցներ, տեղեկատվական զգուշացնող վահանակներ, օպերատիվ արձագանքման հեռախոսահամարներ: Ճանապարհային հոծ անցումներում ոստիկանությունը գրանցում է տրանսպորտային միջոցները: Անտառային հողերը շուրջօրյա հերթապահում են անտառտնտեսության և հրշեջ-փրկարարական ջոկատները: Ըստ ստորագրությանը վավերացված հրահանգի՝ ցանկացած տեսակի կրակ, նույնիսկ մանրալ-



ուսային և հրշեջ-փրկարարական ջոկատները: Ըստ ստորագրությանը վավերացված հրահանգի՝ ցանկացած տեսակի կրակ, նույնիսկ մանրալ-

ԼՈՒԾԱՐՈՒՄ

ՀՀ ԱԻՆ առաջարկով կառավարությունը որոշել է լուծարել «Տեղեկատվական ապահովման և ազդարարման կենտրոն» ՏԱԱԿ, փակ բաժնետիրական ընկերությունը: Ըստ նախարարության, ՏԱԱԿ գործառնություններ են ար-

տակարգ իրավիճակների, պատահարների կամ դրանց ծագման սպառնալիքի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը, ամփոփումը, վերլուծությունը, համապատասխան մարմիններին և բնակչությանն ազդարարումն ու իրազեկումը, քաղաքացիներից, կազմակերպություններից, պետական և ոչ պետական ծառայություններից պատահարների կամ դրանց ծագման սպառնալիքի վերաբեր-

յալ տեղեկությունների հավաքումը, ամփոփումը և այլն: Նույն գործառնություններն ունեն ԱԻ նախարարության այլ ստորաբաժանումներ, ուստի նպատակահարմար է ընկերությունը լուծարել: Առաջիկա 15 օրում կստեղծվի լուծարման հանձնաժողով, որն էլ կբաղվի ընկերության փաստաթղթերի, գույքի, դրամական միջոցների հետ կապված հաշվարկներով:

ՕԳՈՍՏՈՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԸ



ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնն ամփոփել է 2017-ի օգոստոսին հանրապետությունում գրանցված արտակարգ դեպքերի ու պատահարների վիճակագրությունը: Փրկարար ծառայության ստորաբաժանումները օգոստոս ամսին իրականացրել են 2790 ելք՝ 201-ով ավելի, քան 2016-ի օգոստոսին: 1539-ը կանչով փրկարարներն արձագանքել են արտակարգ դեպքերի, 783՝ կենցաղային կանչ, 112՝ կեղծ ահազանգ, 356՝ այլ դեպքեր: Արտակարգ դեպքերից զոհվել է 32 մարդ (այդ թվում 7 կին, 2 երեխա), տուժել 1079 մարդ (այդ թվում 310 կին և 185 երեխա): Փրկարարները 23 մարդու կյանք են փրկել: 2016-ի օգոստոսին փրկել էին 13 հոգու: Անցած տարվա օգոստոսի համեմատ զոհերի քանակը նվազել է 11-ով, տուժածների՝ 11-ով ավելի: 2016-ի օգոստոսին 1133

ահազանգ), որից հորդ է գրանցվել 1055 դեպքում (2016-ի օգոստոսին՝ 980 դեպք): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հրդեհների քանակն աճել է 75-ով: 95 դեպքում կեղծ ահազանգ է գրանցվել, 25 դեպքում հսկողությանը իրականացվող այրումը հրդեհի տեղ են ընդունել և ահազանգել փրկարարներին: Հրդեհներից տուժել է 3 մարդ (2016-ի օգոստոսին՝ 1 զոհ, 2 տուժած): Նյութական վնասը մոտ 122 մլն դրամ՝ 387 մլն-ով պակաս, քան 2016-ի օգոստոսին: Հրդեհների մեծ մասը բու-

սածակ տարածքներում է գրանցվել՝ 660 դեպք, 2016-ի օգոստոսին՝ 643 դեպք: Սրանից բացի կրակի բաժին են դարձել աղբ 111, առանձնատուն 82, բնակելի շենք՝ 48, տրանսպորտային միջոց՝ 35, կրպակ-տնակ-ավտոտնակ՝ 21, պահեստավորված անասնակեր՝ 9 և այլն: Քաղաքներում գրանցվել է 451 հրդեհ, գյուղերում՝ 275: 2016-ի օգոստոսի համեմատ աճել է թե քաղաքային, թե գյուղական հրդեհների քանակը, համապատասխանաբար՝ 11-ով և 82-ով: Երևանում գրանցվել է 287 հրդեհ: Մարզերից ամենաշատը

տուժել է Կոտայքը՝ 115 քաղաքային և 121 գյուղական հրդեհ, ամենաքիչը՝ Վայոց ձորը՝ 10 քաղաքային, 13 գյուղական հրդեհ: **Ճանապարհատրանսպորտային պատահարներ՝ 6ՏՊ**
Գրանցվել է 367 6ՏՊ՝ 65-ով ավելի, քան անցած տարի օգոստոսին: 6ՏՊ-ներից զոհվել է 26, տուժել՝ 543 մարդ: 2016-ի օգոստոսի համեմատ զոհերի թիվը նվազել է երկուսով, տուժածների՝ աճել 99-ով: 6ՏՊ-ների մեծ մասը՝ 197 դեպք, բախումներն են: 90 դեպք՝ վրաներ, 39 դեպք՝

տրանսպորտային միջոցների շրջում, 41 դեպք՝ այլ բնույթի 6ՏՊ: **Թունավորումներ**
Հաշվետու ժամանակահատվածում գրանցվել է 523 թունավորում, զոհվել է 3, տուժել 528 մարդ: 2016-ի օգոստոսին՝ 557 թունավորում, 5 զոհ, 557 տուժած: Թունավորումների հիմնական պատճառներն են. ալկոհոլ՝ 126, դեղորայք՝ 98, կարիճի և սարդի խայթոց՝ 93, քիմիական նյութեր՝ 90, սննդամթերք՝ 39, մեղվի խայթոց՝ 38, օձի խայթոց՝ 25 և այլն: Թունավորումների մեծ մասը գրանցվել է Երևանում՝ 347: Մարզերից ամենաշատ թունավորումներ եղել են Արմավիրում՝ 73, ամենաքիչը՝ Տավուշում՝ 1 և Վայոց ձորում՝ 2: **Այլ դեպքեր**
2017-ի օգոստոսին գրանցվել է 4 փլուզում, 4 պայթյուն, 1 քարաթափում, 2 ուժեղ քամի, մայրուղային խողովակաշարի մեկ վթար և այլն: **Հրապարակման պատրաստեց Արամ ԶԱՔԱՐՅԱՆԸ**



Արդյունքներ, եզրակացություն

EU MOLDEX 2017 միջազգային դաշտային վարժանքի արդյունքների ամփոփ եզրակացությունը պատրաստ կլինի 2018-ի հունվար-փետրվարին: Վարժանքը գնահատողները տարբեր երկրներից են, և պետք է ամեն մեկը տա իր եզրակացությունը, այնուհետև հավաքեն, քննարկեն ու նոր միայն միասնական եզրակացություն հրապարակեն: Եզրակացությունը կկոչվի «Քաղված դասեր»:

ՕՏԱՐՆԵՐԸ ՄԵԶԱՆԻՑ ՄՈՎՈՐԵԼՈՒ ԲԱՆ ՈՒՆԵՆ

EU MOLDEX 2017 առաջին միջազգային դաշտային վարժանքի եզրակացությունը՝ 2018-ին

Այս տարեկանը պարբերաբար տեղեկացրել ենք, որ մեր փրկարարները սեպտեմբերի 17-21-ը մասնակցել են «Տարերային և տեխնաժին աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում Արևելյան գործընկերության երկրներում» (PPRD East-2) ծրագրի շրջանակներում Մոլդովայում կազմակերպվող EU MOLDEX 2017 առաջին միջազգային դաշտային վարժանքին («911.Արտակարգ թերթ», 2017, թիվ 3, 6, 8, 9, 24, 34):

PPRD East ծրագիրը մեկնարկել է 2010-ին (2010-2014 հատվածում PPRD East-1, 2014-ից մինչ օրս PPRD East-2), և այդ ընթացքում եղել են քննարկումներ, համաժողովներ: EU MOLDEX 2017 դաշտային վարժանքին մասնակցել են Արևելյան գործընկերության բոլոր երկրները՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Բելառուս, Մոլդովա, Նաև Չեխիան, Դանիան, Ռումինիան: Դիտորդներ են եղել Էստոնիայից, Ֆինլանդիայից և Միացյալ Թագավորությունից:

Հայաստանից մասնակցել են քաղաքային որոնողափրկարարական մեկ թիմ՝ 14 հոգի, երկու բժիշկ, քիմիական, կենսաբանական, ճառագայթային, միջուկային մոնիթորինգ իրականացնող հինգ մասնագետ, թիկունքի ապահովման մեկ մասնագետ: Միջազգային վարժանքների դեպքում ստեղծվում է միջազգային որոնողափրկարարական թիմերի ղեկավարման շտաբ: Այս շտաբում Հայաստանն ունեցել է երկու ներկայացուցիչ, ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի ղեկավարի տեղակալ, որոնողափրկարարական հարցերով միջազգային խորհրդատվական խմբի (INSARAG) արտաքին որակավորում անցած հայկական թիմի իրամանատարի տեղակալ Սամվել Շահնուրայան և ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության ճգնաժամա-





րարները՝ Վրաստանի, Մոլդովայի, Բելառուսի, Ուկրաինայի գործընկերների հետ: Մեր փրկարարները զբաղված են եղել երկրաշարժից տուժած շենքի վերևի հարկերում մնացած մարդկանց հայտնաբերում-տարահանումով՝ պարանային վարժություններ և փրկատների տակ մնացած մարդկանց հայտնաբերում-գուրծումով՝ հատուկ տեխնիկայի օգնությամբ փրկատների քանդում-կտրում:

Երկրաշարժից տուժած 5 հարկանի շենքի տարբեր հարկերում, այդ թվում վերելակներում, շենքերի փրկատների հայկական թիմը հայտնաբերել է 12 «տուժածի» և 3 «գոհի»: Բոլոր թիմերը միասին 82 «տուժածի» են փրկել, իսկ գինու գործարանում տեղի ունեցած պայթյունի հետևանքով ամոնիակի արտահոսքի տարածքում օգնություն ցուցաբերել 7 «տուժածի»: Բոլոր թիմերը միասին 33 «տուժածի» են հայտնաբերել և տեղափոխել հիվանդանոցներ:

Մկրտիչ Ուլիկյանի խոսքով Չեխիայի թիմի իրամանատարը հայտարարել է, որ գոհ է Հայաստանի թիմի հետ համագործակցության մակարդակից: Մեր փրկարարների աշխատանքը դրական է գնահատել նաև Միացյալ Թագավորությունից եկած դիտորդը:

Միջազգային որոնողափրկարարական թիմերի ղեկավարման շտաբում մեր երկրի ներկայացուցիչ Սամվել Շահնուրայանի խոսքով վարժանքը հետաքրքիր էր նրանով, որ ամեն թիմի գնահատում էր PPRD East ծրագրի մի ներկայացուցիչ: Հայաստանի փրկարարների աշխատանքը գնահատողն ասել է, որ մերոնք ամբողջ ծավալով ամենաշատն էին օգտագործում միջազգային չափանիշներով սահմանված համակարգերը: Որոնողափրկարարական հարցերով միջազգային խորհրդատվական խումբը՝ INSARAG, սահմանել է փրկարարական աշխատանքների միասնական չափանիշներ, սակայն թիմերի աշխատանքները տարբեր էին ու սա, ըստ Սամվել Շահնուրայանի, ուսանելի էր: «Անկախ վարժանքի կազմակերպման մակարդակից ու սցենարից, վարժանքը միշտ նորություն է, փորձառուները բարձրացնում են հարավորությունը: Թիմերը միասին էին աշխատում, համագործակցություն կար, մեկուսացած չէին, համագործակցության բաղադրիչը շատ լավ էր ստացվել: Վարժանքի ժամանակ մենք ենք տեխնիկական օգնություն ցուցաբերել, մեզ են գույքով օգնել: Մեր տղաները շատ լավ էին



տիրապետում ամեն ինչին: Շատերը մեզանից սովորելու բան ունեն», - վստահ է Սամվել Շահնուրայանը:

EU MOLDEX 2017 միջազգային դաշտային վարժանքի արդյունքների ամփոփ եզրակացությունը պատրաստ կլինի 2018-ի հունվար-փետրվարին: Վարժանքը գնահատողները տարբեր երկրներից են, և պետք է ամեն մեկը տա իր եզրակացությունը, այնուհետև հավաքեն, քննարկեն ու նոր միայն միասնական եզրակացություն հրապարակեն: Եզրակացությունը կկոչվի «Քաղված դասեր»:

Օրագրով 2017-2022 հատվածի համար սահմանված է ավելի քան 50 միջոցառում. կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման ոլորտում օրենսդրության վերլուծություն և կատարելագործում, կենսաբանական գործոնով պայմանավորված արտակարգ իրավիճակների ժամանակ բնակչության պաշտպանության համակարգի կատարելագործում, հակամանրէային կայունության համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործում, ճառագայթային, քիմիական, կենսաբանական սպառնալիքների ներուժ ունեցող կառույցների հաշվառում ու անձնագրավորում, «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոնների հետ աշխատող լաբորատորիաներում ռիսկերի կատարելագործում», «Քլոր տեղափոխող ավտոմեքենայի վթարի դեպքում հակազդման գործողությունների իրականացումը», «Հայաստան-Վրաստան սահմանային անցակետում ճառագայթային և քիմիական բնույթի պատահարներին հակազդում» և այլն:

Քիմիական թունավորումների, ճառագայթային ախտահարումների, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին և կանխարգելմանն առնչվող մասնագետների, պետական կառույցների ներկայացուցիչների համար պարբերաբար կկազմակերպվեն դասընթացներ, սեմինարներ, վերապատրաստումներ, իսկ քաղաքացիների համար

ՆՈՐ ՌԱԳՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

նավորված արտակարգ իրավիճակներին արձագանքման բազմաօլորտ վարժանքների անցկացում «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպումը և իրականացումը», «Քլոր տեղափոխող ավտոմեքենայի վթարի դեպքում հակազդման գործողությունների իրականացումը», «Հայաստան-Վրաստան սահմանային անցակետում ճառագայթային և քիմիական բնույթի պատահարներին հակազդում» և այլն:

Քիմիական թունավորումների, ճառագայթային ախտահարումների, վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին և կանխարգելմանն առնչվող մասնագետների, պետական կառույցների ներկայացուցիչների համար պարբերաբար կկազմակերպվեն դասընթացներ, սեմինարներ, վերապատրաստումներ, իսկ քաղաքացիների համար



նախ կիրականացվի կենսաբանական, քիմիական, ճառագայթային գործոնների բացասական ազդեցության և վերջինիս կանխարգելման վերաբերյալ իրազեկվածության մակարդակի և կարիքների գնահատում, ապա կմշակվի կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության հարցերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ազգային համակարգ:

Հանրապետության տարածքի առանձին հատվածներ բնական օջախ են տարբեր վտանգավոր

վարակների ժանտախտի, սիրիախտի, լեպտոսպիրոզի, էրիզիպելիդի համար: Հանրային առողջության համար քիմիական վտանգավոր աղբյուր են հանքարդյունաբերության, շինարարական և քիմիական նյութերի արտադրության, էներգետիկական արդյունաբերության ձեռնարկությունները, ժամկետանց թունաքիմիկատների պահեստները և գերեզմանոցները, պղծամբարները, կենցաղային աղբավայրերը, արտանետումները: Ի հավելումն հանրապետության տարածքում

առկա քիմիապես վտանգավոր օբյեկտները, խորհրդային տարիներից մնացած տարաբնույթ քիմիական, այդ թվում՝ թունավոր և խիտ թունավոր նյութերի առկայությունը, որոնք գտնվում են չաշխատող և պատշաճ վերահսկողության չենթարկվող ձեռնարկություններում և քիմիական լաբորատորիաներում:

Մեր երկրում կան նաև խորհրդային տարիներից մնացած նախկին «Հայգյուղքիմիա» արտադրական միավորման հիմնականում քանդված կամ կիսաքանդ պահեստային շինություններ, որոնցում մնացել են ժամկետանց թունաքիմիկատներ:

Ռազմավարության կյանքի կոչելու արդյունքում կունենանք կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության կառավարման կատարելագործված համակարգ, կենսաբանական, քիմիական և ճառագայթային անվտանգության ապահովման կայուն մեխանիզմներ: ■

Եղը՝ Արամ ԶԱԲՐԱՆԻ



Հասարակության լիարժեք անդամները

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հասարակության լիարժեք անդամներ են, և հասարակությունը պետք է պահպանի բարոյականության նորմերը...

Բնությունն իմաստուն է և հոգ է տանում, որպեսզի հաշմանդամ երեխաները կարողանան ադապտացվել, երբ հնարավոր չէ ոչինչ փոխել: Այսինքն ոչ թե համակերպվել իրավիճակին, մեկուսանալ և ոչինչ չանել, այլ չփորձել փոխել այն, ինչ հնարավոր չէ փոխել, և բացահայտել այն, ինչը հասանելի է և մատչելի: Հաշմանդամ երեխաները սովորական երեխաներ են: Ինչպես և բոլոր երեխաները՝ նրանք նույնպես սիրում են խաղալ, նկարել, երգել, պարել ...

ՆԵՐԱՌՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ

մար ստեղծվում են հատուկ հաստատություններ, որտեղ նրանք կարող են սովորել, աշխատել, շփվել իրենց նման մարդկանց հետ և ստանալ բազմաթիվ ծառայություններ:

Սոցիալական մոդելը կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա. ստեղծել հավասար հնարավորություններ՝ ապահովելով հաշմանդամություն ունեցողի լիարժեք մասնակցությունն ունեցողի կյանքի բոլոր ոլորտներում, չեղարկել անհատի ուժեղ կողմերի և պահպանված կարողությունների վրա նպաստելով նրա առավել ակտիվ մասնակցությանը հասարակական կյանքում: Հաշմանդամների վերականգնման լավագույն մոդելը՝ բժշկական և սոցիալական մոդելների առաջադեմ մոտեցումների համադրումն է:

Սեր երկրում 2005-ի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որով մեր երկրում ամրագրվել է ներառական կրթությունը, ինչը մանկապարտեզ և դպրոց մտնելու հնարավորություն է ընձեռել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներին: Ներառական կրթությունը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումն է հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ:



Սեր երկրում 2005-ի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որով մեր երկրում ամրագրվել է ներառական կրթությունը, ինչը մանկապարտեզ և դպրոց մտնելու հնարավորություն է ընձեռել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներին:

րուններ ունեցող մարդիկ (երեխաներ):

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հասարակության լիարժեք անդամներ են, և հասարակությունը պետք է պահպանի բարոյականության նորմերը նաև նրանց նկատմամբ՝ հարգելով նրանց արժանապատիվ կյանք վարելու, կրթություն ստանալու, աշխատանք ընտրելու և ընտանիք կազմելու սահմանադրական իրավունքը, ճիշտ ընկալելով նրանց կարիքներն ու օգնելով լիարժեք և հավասար հիմունքներով մասնակցելու հասարակական կյանքին:

Ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում երեխաների թիվը չպետք է գերազանցի. դպրոցական դասարանում՝ 25 երեխա, մանկապարտեզի խմբում՝ 20 երեխա, ԿԱՊԿՈՒ երեխաները պետք է կազմեն երեխաների ընդհանուր թվի 10 տոկոսը: Հայաստանում ներառական դպրոցում ԿԱՊԿՈՒ երեխաների լիարժեք ուսուցման և կենսագործունեության, նաև՝ արտակարգ իրավիճակներում նրանց անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է դպրոցների շենքերի ենթակառուցվածքների զգալի փոփոխություն ներառական կրթության ճանապարհին ծառայած խոչընդոտների վերա-

Հրապարակումը պատրաստվել է Թերեզա Դիլբարյանի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառման և անվտանգության հարցերը» գեկույցի հիման վրա: Ձեկույցը ներկայացվել է ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի 25-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովին:

ԳԻՆԵՍԻ ԳՐԹԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԸ

Ակադեմիայի ուսանող ճկույթով քաշեց 44 տ կշռող երկու վագոն

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի «Քաղաքացիական պաշտպանություն» ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանող Յուրի Սաքունցը սեպտեմբերի 25-ին ծննդյան 21-րդ տարեդարձի օրը, սահմանեց հերթական 14-րդ ռեկորդը: Մասին քաղաքի երկաթգծի կայարանում ճկույթ մատով քաշեց 44 տ քաշով երկու վագոն: Ընդամենը վայրկյաններ պահանջվեցին Յուրիից գծերի վրայով գնացքները 15 մ 90 սմ իր կողմը գլորելու համար: Իսկ մեկ տարի առաջ նույն գործողությունը կատարել էր բանակում, այդ անգամ միմյանց կապված 12 տ քաշ ունեցող 4 զինվորական «Ջիփ» մեքենաներ քաշել դարձյալ ճկույթ մատի գործադրմամբ: «Պատրաստվում եմ նոր ռեկորդի, այս անգամ ինքնաթիռ եմ քաշելու», - հայտնում է համեստ ակադեմիականը:



բայան ջոկատում անընդհատ մարզվելով ու սեփական ցուցանիշները բարելավելով: Նաև ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից է: Ասում է, թե Աստուծու տված շնորհ է, որևէ հնար չի կիրառում նման դուցազնական գործողություն կատարելու համար. «Առաջին անգամ 16 տարեկանում եմ պատահաբար մեքենա քաշել: Այդ ժամանակ էլ զգացի, որ կարող եմ, և այդպես սկսեցի մարզվել»:

Ռեկորդ սահմանելուց հետո Յուրին հանգիստ ապում է, որ զգացողությունը նույնն է՝ ինչպես նախորդ ռեկորդների ժամանակ. «Պարզապես իմ առջև նպատակ եմ դնում և հասնում եմ»: Իսկ հայրը՝ Նիկոլայ Սաքունցը, նշում է, որ Յուրին 6 տարեկանից է զբաղվել ըմբշամարտով և 8 տարի շարունակ տարբեր արդյունքներ է գրանցել թե Հայաստանի, թե ԱՊՀ երկրների մրցամարտերում. «16 տարեկան էր, երբ մի օր եկավ տուն և ասաց՝ ես կարող եմ ճկույթով մեքենա քաշել: Այդպես մեր շարենցական քաղաքում սահմանեց իր առաջին ռեկորդը՝ քաշելով «Մերսեդես» մակնիշի



ակտմեքենան: Իսկ երկրորդ ռեկորդն այն էր, որ ձեռքերը մեքենին դրած՝ 1,5 րոպեում պատռեց է 500 էջանոց 20 գիրք: Երրորդ ռեկորդը 20 կգ գիրք էր, որ դիմացը՝ ձեռքերի հորիզոնական դիրքով, պահեց 1 րոպե 50 վայրկյան: 2որրորդը՝ ֆուտբոլի 3 գնդակների վրա 58 հատ «ժիմ» վարժություն կատարելն էր: Մենք Անգլիայից նամակ ստացանք, որ աշխարհում նման բան դեռ չի եղել: Այդ նույն վարժությունը բանակում է կատարել բարեկամվելով սեփական արդյունքը՝ «ժիմերի» քանակը հասցնելով 86-ի»: Նիկոլայը նաև ընդգծեց, որ այս նոր ռեկորդն առանձնահատուկ նշանակություն ունի և Յուրիի, և ընտանիքի համար. «Մենք նվիրում ենք բանակում ծառայող բոլոր զինվորներին, որոնք հս-

կում են մեր սահմանները, նվիրում ենք իմ կրսեր որդուն՝ Գոռ Սաքունցին, որը ծառայում է Հադրուբուն:

«Դյուցազնագիրք» դյուցազունների ասոցիացիայի նախագահ Վարդան Թովմասյանն էլ նշեց, որ սա Յուրիի 14-րդ ռեկորդն էր. «Դյուցազնագրում»։ Մյուս տարի կիրատարակվի գրքի 3-րդ հատորը, որտեղ կլինեն նաև այս վերջին ռեկորդները: Յուրիի այս նոր արդյունքը նաև ներկայացվելու է Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու համար: Նախորդներից մի քանիսն էլ է ներկայացվել, պարզապես սպասում են իրենց գրանցման հերթին:

